ՀՏԴ 796.4 DOI: 10.53068/25792997-2023.3.10-34

# ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱՑԱԾ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՎԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

*Հ. Ս. Գասպարյան, Ն. Վ. Սելումյան, Ա. Տ. Պետրոսյան*
*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Պատանի մարմնամարզիկներ, սպորտային կարիերա, կարիերայի ավարտ, պատճառներ, սպորտից հեռանալ:

**Հետազոտության արդիականություն**: «Սպորտային կարիերան» բազմամյա սպորտային գործունեություն է, որն ընտրում է անհատը մեկ կամ մի քանի մարզաձևում՝ իր անհատական առավելագույն սպորտային կատարելագծումն իրագործելու համար [3]: Մարմնամարզիկի սպորտային կարիերան ներառում է 4 փուլ, որոնք ընդգրկում են առանձին ենթափուլեր: Մինչև 18 տարեկանը դեռահասներն անցնում են սկզբնական, նախնական և խոր մասնագիտացված պատրաստության փուլերով: Վերջին տասնամյակներում աշխարհի տարբեր երկրների գիտնականների կողմից իրականացված հետազոտությունները թույլ են տվել պարզել մարզիկների սպորտային կարիերան սահմանափակող մի շարք պատճառներ [2,5,6,7,8,9]: Ուսումնասիրված հետազոտություններից ընդամենը երկուսն են առնչություն ունեցել սպորտային մարմնամարզության հետ [6,10]: Այդուհանդերձ, այդ հետազոտությունների արդյունքները չեն կարող հստակ պատկերացում տալ Հայաստանում մարզվող պատանի մարմնամարզիկների սպորտային կարիերան սահմանափակող պատճառների մասին, քանի որ դրանք իրականացվել են այլ երկրներում, որտեղ սոցիալական պայմանները, սպորտային միջավայրը, մարզաձևերի մասսայականացվածությունը, ահատի զարգացման արտաքին տարբեր պայմաններն ու գործոնները զգալիորեն այլ են: Հիմք ընդունելով Ու. Բրոնֆենբրեների մարդու զարգացման մոդելը [4]՝ կարելի է ենթադրել, որ մարզիկի զարգացման գործընթացի, ինչպես նաև սպորտից հեռանալու պատճառների վրա կարող է ազդեցություն ունենալ ոչ միայն այն միկրոհամակարգը, որում նա ապրում է (ընտանեկան գործոններով պայմանավորված սոցիալական կարգավիճակը, հասակակիցները, թիմի անդամները, դասընկերները և այլն), այլև՝ մեզոհամակարգը (սպորտային ենթակառուցվածքները, լրատվամիջոցների ուշադրությունը, հանրային աջակցությունը) և

մակրոհամակարգը (երկրի չափերը, քաղաքացիների բարեկեցության մակարդակը, ավանդույթները և այլն) [9]: Այսպիսով՝ տարբեր երկրներում իրականացված համանման հետազոտությունների արդյունքները չեն կարող մեծ ճշգրտությամբ ցույց տալ սեփական երկրում գործող մարզիկների, այդ թվում՝ մարմնամարզիկների սպորտային կարիերայի ավարտը պայմանավորող պատճառները: Այս փաստն ընդգծում է թեմայի **արդիականությունը**:

**Հետազոտության նպատակն է՝** բացահայտել մարմնամարզությունում մասնագիտացած դեռահասների սպորտային կարիերայի ավարտի պատճառները:

**Հետազոտության խնդիրներն են՝** 1. Ի հայտ բերել պատանի մարմնամարզիկների սպորտային կարիերան սահմանափակող առաջնային պատճառները: 2. Վեր հանել հայ և օտարերկրյա մարմնամարզիկների սպորտային կարիերան սահմանափակող պատճառների տարբերությունները:

**Հետազոտության մեթոդներն ու կազմակերպումը:** Հետազոտության խնդիրների լուծման նպատակով պլանավորվել է իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն: Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են հատուկ մշակված հարցաթերթիկի միջոցով, որում ներկայացված հարցերի միջոցով պարզվել են՝ մասնակիցների կենսագրական տվյալները, մարզումները սկսելու և ավարտելու տարիքային տվյալները, սպորտային կարիերայի տևողությունը: Սպորտային մարմնամարզությունում կարիերան սահմանափակող պատճառները պարզելու համար տրվել է բաց հարց, ըստ որի՝ նախկին մարմնամարզիկները պետք է պատասխանեին, թե ի՞նչ պատճառով կամ պատճառներով են ավարտել իրենց սպորտային կարիերան: Իրականացվել է պատասխանների բովանդակային վերլուծություն, որի արդյունքում հնարավոր է եղել դասակարգել այն բոլոր պատճառները, որոնք նշվել են նախկին մարմնամարզիկների կողմից: Պատճառների դասակարգման գործընթացում ուղղորդվել ենք պատասխանների բովանդակությամբ և գիտական գրականությունում ընդունված սկզբունքներով [7,9]: Հարցումներն իրականացվել են 2022-ին Հայաստանի մարմնամարզության տարբեր մարզադպրոցներում (մարզիչների հետ), Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում (ուսանողների հետ) և ներկայումս այլ մասնագիտություններով զբաղվող նախկին մարմնամարզիկների հետ: Հետազոտության ընթացքում վերլուծվել են 68 անհատի տվյալներ, որոնք նախկինում մարզվել են սպորտային մարմնամարզությամբ և ավարտել են իրենց կարիերան պատանեկան տարիքում:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Մարմնամարզիկների տարիքային վիճակագրական տվյալները (միջին թվաբանական, միջին քառակուսային շեղում) վերլուծելով՝ ստացվել են հետևյալ ցուցանիշները. մարզումները սկսելու տարիք՝ 6,5 ± 1,62, մարզումներն ավարտելու տարիք՝ 13,27 ± 1,72, սպորտային կարիերայի տևողություն՝ 6,77 ± 2,23: Հետազոտության բոլոր մասնակիցները կարիերան ավարտել են 11-17 տարեկանում:

Բացահայտվել են հայ պատանի մարմնամարզիկների սպորտային կարիերան սահմանափակող 12 տարբեր պատճառներ: Նախկին մարզիկների կողմից առավել հաճախ նշված պատճառներն են եղել՝ սպորտային նվաճումների պակասը (33,82 %), սպորտային մոտիվացիայի պակասը (27,94 %), վնասվածքները (19,11%): Նշված և մյուս բոլոր պատճառները ներկայացված են 1–ին աղյուսակում:

Հայտնի է, որ բազմամյա մարզման ընթացքում գալիս է մի ժամանակ, երբ մարզիկն ի վիճակի չի լինում զարգացնել իր սպորտային ձեռքբերումները կամ կատարելագործել սեփական ընդունակությունները ու հմտությունները: Արդյունքում, նրա սպորտային արդյունքները կայունանում են կամ հետընթաց են ապրում և աստիճանաբար վերջինս դուրս է մնում մրցակցությունից: Թեպետ, սպորտային նվաճումները պայմանավորված են տարբեր գործոններով (սոցիալ–տնտեսական, գիտատեխնիկական և այլն), այդուհանդերձ անհատական գործոնների նշանակությունն անհամեմատ մեծ է: Ըստ սպորտի գենետիկայի մասնագետների՝ գործունեության յուրաքանչյուր բնագավառում, այդ թվում սպորտում՝ մարզիկների հաջողությունները 75-80 տոկոսով պայմանավորված են գենոտիպով, իսկ դաստիարակության, ուսուցման, մարզման և միջավայրի մյուս գործոնների նշանակությունը հաջողության հասնելու համար ընդամենը 15-20 տոկոս է [1]:

Սպորտային նպատակների բացակայությունը, մարզվելու ցանկության նվազումը և այլ հետաքրքրությունների պատճառով մարզումները դադարեցնելը դիտարկվել են որպես սպորտային մոտիվացիայի բացակայություն: Հարկ է նշել, որ սպորտային մոտիվացիայի ձևավորումը համարվում է մարզիկների հոգեբանական պատրաստության կարևորագույն կողմերից մեկը: Հետևաբար, սպորտից հեռանալը որոշակիորեն պայմանավորված է նաև մարզչի ոչ արդյունավետ գործունեությամբ: Իհարկե, սպորտային մոտիվացիան պայմանավորված է ներքին և արտաքին մի շարք մոտիվացիոն գործոններով, որոնց մասին մանրամասն խոսվում է Ռ.Ա.Փիլոյանի, Ե.Պ.Իլյինի, Ե.Գ. Բաբուշկինի, Բ.Ջ.Կրետիի, Մ.Նունումուրայի և այլ հեղինակների աշխատանքներում:

**Աղյուսակ 1**

***Պատանի մարմնամարզիկների սպորտային կարիերայի ավարտը պայմանավորող պատճառները***

| Պատճառները | | N | % |
|---|---|---|---|
| 1. | Սպորտային նվաճումների և առաջընթացի պակաս | 23 | 33,82 |
| 2. | Սպորտային մոտիվացիայի պակաս | 19 | 27,94 |
| 3. | Սպորտային վնասվածքներ | 13 | 19,11 |
| 4. | Այլ մարզաձև տեղափոխվել | 10 | 14,70 |
| 5. | Ընտանեկան պատճառներ | 9 | 13,23 |
| 6. | Ֆինանսական խնդիրներ | 9 | 13,23 |
| 7. | Ուսման և մարզումների համադրման դժվարություն | 8 | 11,76 |
| 8. | Վնասվածքներ ստանալու վախ | 7 | 10,29 |
| 9. | Մարզչին առնչվող պատճառներ | 6 | 8,82 |
| 10. | Գերհոգնածություն | 5 | 7,35 |
| 11. | Ենթակառուցվածքների և մարզագույքի ոչ բավարար վիճակ | 4 | 5,88 |
| 12. | Առողջական խնդիրներ | 2 | 2,94 |

Սպորտային վնասվածքները համարվում են սպորտային գործունեության հատուկ երևույթ: Դրանց առաջացման և կանխարգելման պատճառների մասին մանրամասն խոսվում է սպորտային բժշկության և ֆիզիոլոգիայի տեսությունում: Մարմնամարզությունում վնասվածքների առաջացման և կանխարգելման օրինաչափությունների մասին տեղեկություններ կան Վ.Ն.Զայցևի, Ա.Վ.Դորոնցևի, Ռ. Թոմասի, Ռ.Միուզենի, Ջ.Բորմսի, Ջ.Գաբելի, Ի.Կառեի և այլոց աշխատանքներում:

Այլ մարզաձև տեղափոխումը կարող է պայմանավորված լինել տարատեսակ գործոններով, հետևաբար այս պատճառը վերլուծելու համար անհրաժեշտ է հետագայում առավել համակողմանի տեղեկություններ ստանալ մարզիկներից:

Այնպիսի պատասխաններ, ինչպիսիք են՝ ընտանեկան ներքին խնդիրները, ընտանիքի անդամների կարծիքն ու դիր-

քորոշումը մարզաձևի նկատմամբ, ընտանիքի հետ տեղափոխումն այլ երկիր, դիտարկվել են որպես ընտանիքին առնչվող պատճառներ: Մարմնամարզիկների սպորտային կարիերայի ընթացքում ծնողների աջակցության կարևորության մասին մանրամասն խոսվում է բրազիլացի գիտնականներ Միրան Նունումուրայի և Մարիսիա Սանթոս Օլիվերյիայի վերջին հետազոտություններից մեկում:

Ֆինանսական խնդիրները՝ որպես սպորտային կարիերան ավարտելու պատճառ, նշել են հարցվողների 13,23 տոկոսը, սակայն չի պարզաբանվել, թե դրանք ինչ բնույթի են և ինչպես են ազդել սպորտից հեռանալու որոշման վրա: Հարկ է նշել, որ այս պատճառը նշվել է արտասահմանցի տարբեր գիտնականների կողմից իրականացված հետազոտություններում [5,9]:

Ուսուցման և մարզումների համադրման դժվարությունը նույնպես հատուկ է պատանի մարզիկներին: Այս պատասխանը նշվել է նաև Ե.Ա.Դերգաչի, Ս.Կ.Ռյաբինինայի, Օ.Բ.Զավյալովայի և այլոց հետազոտություններում:

Վնասվածքներ ստանալու վախը պայմանավորված է և՛ մարզիկի հոգեբանական առանձնահատկություններով, և՛ մարզաձևի յուրահատկություններով: Ընդհանրապես վախի հաղթահարումը տեղի է ունենում հոգեբանական պատրաստության գործընթացում: Վախի հաղթահարման գործընթացում կարևոր է նաև մարզչի հմտությունները, կիրառվող մեթոդներն ու միջոցները, ինչպես նաև հատուկ մարզագույքը, որը թույլ է տալիս կանխել վնասվածքները և հեշտացնում է նոր տարրեր յուրացնելու գործընթացը: Այդուհանդերձ, սպորտային մարմնամարզությունում վնասվածքներ ստանալու վախի հաղթահարումը կարող է տեղի ունենալ որոշակի դժվարություններով, քանի որ մարզիկները ստիպված են պարբերաբար բարդացնել վարժությունները՝ կատարելով կոորդինացիոն բարդ տարրեր: Այս հարցի մասին մանրամասն տեղեկություններ ներկայացված են սպորտային հոգեբանության տեսությունում:

Մարզչին առնչվող պատճառներն իրենց բնույթով բավականին տարբեր են: Տվյալ հետազոտության ընթացքում նշվել են այնպիսի պատճառներ, ինչպիսիք են՝ մարզչի հետ հարաբերությունների վատացումը, մարզչի հեռանալը սպորտից կամ երկրից, մարզչի փոփոխությունը:

Գերհոգնածության պատճառով մարզումները դադարեցրել է հարցվողների 7,35 տոկոսը: Հարկ է նշել, որ գերհոգնածության և գերբեռնվածության պատճառով սպորտից հեռանում են ոչ միայն մարմնամարզիկները, այլև՝ մի շարք այլ մարզաձևերի ներկայացուցիչներ: Գերմարզվածության, ֆիզիկական ու հոգե-

կան հոգնածության մասին տեղեկություններ կան նաև Ե.Ա.Դերգաչի, Մ.Մ.Իվանովայի, Վ.Վ.Սավչենկոյի հետազոտություններում: Հարկ է նշել, որ առանձին հետազոտություններում պարզվել է, որ գերմարզվածությունն և գերբեռնվածությունը պատանի մարզիկների սպորտից հեռանալու առաջնային պատճառներից են [2]:

Այնպիսի պատասխաններ, ինչպիսիք են՝ «դահլիճների ոչ բավարար կահավորանքը», «անհամապատասխան, ոչ ժամանակակից մարզագույքը», դիտարկվել են որպես ենթակառուցվածքների և մարզագույքի ոչ բավարար վիճակն արտահայտող պատճառներ:

Պատանի մարմնամարզիկների սպորտային կարիերան սահմանափակող ամենաքիչ նշված պատճառը եղել է առողջական խնդիրները: Քանի որ հարցվողները չեն նշել, թե ինչպիսի առողջական խնդիրների պատճառով են հեռացել սպորտից, այս խմբի պատճառները չեն վերլուծվել: Առողջական խնդիրները կարող են լինել ժառանգական, ձեռքբերովի և կարող են ընդհանրապես կապ չունենալ սպորտի հետ:

Վերջին տարիներին նմանատիպ հետազոտություն իրականացվել է նաև եվրոպացի գիտնականների կողմից: Նրանց հետազոտությունների արդյունքներում գրանցվել են բավականին տարբեր տվյալներ, թեպետ կան որոշակի ընդհանրություններ: Ըստ Ի. Սվոնի և համահեղինակների (2022) տվյալների՝ սպորտային մարմնամարզությունից հեռանալու հիմնական պատճառներն են՝ այլ ցանկությունները, ոչ բավարար հաջողությունները (մարզիկի ցանկությամբ, պահանջներով պայմանավորված) և մեծ տարիքը [10]: Այս տարբերությունները կարող են պայմանավորված լինել մի շարք գործոններով, մասնավորապես՝ հետազոտվողների բնակավայրով (աշխարհագրական, սոցիալ–տնտեսական գործոններ), ինչպես նաև հետազոտողների կիրառած մեթոդների և մեկնաբանությունների առանձնահատկություններով:

**Եզրակացություն:** Պատանի մարմնամարզիկների սպորտային կարիերայի ավարտը պայմանավորված է 12 տարբեր պատճառներով, որոնցից առաջնային են՝ սպորտային նվաճումների պակասը (մարզիկի համար ոչ բավարար առաջընթացը), մոտիվացիայի պակասը, վնասվածքները: Հետազոտության արդյունքները թույլ կտան մարզիչներին, մարզադպրոցների ղեկավարներին և համապատասխան գերատեսչություններին առավել նպատակային աջակցել պատանի մարմնամարզիկներին՝ նրանց սպորտային կարիերան առավել երկար և արդյունավետ դարձնելու համար:

## 🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Моссэ И. Б, Генетика спорта: вчера, сегодня, завтра.Труды БГУ 2012, том 7, часть 1. - с. 56-68. http://www.bio.bsu.by/proceedings/articles/2012-7-1-56-68.pdf [access: 25.09.23].
2. Савченко В.В., Раннее завершение карьеры в спортивных единоборствах восточной направленности в возрасте 16-18 лет в свете проблемы ухода из спорта в целом: возможности прогноза и корректировки проблемы. Вестник спортивной науки, 6, 2019.- с. 31-37. https://cyberleninka.ru/article/n/rannee-zavershenie-kariery-v-sportivnyh-edinoborstvah-vostochnoy-napravlennosti-v-vozraste-16-18-let-v-svete-problemy-uhoda-iz-sporta-v [access: 25.09.23]
3. Alfermann, D., & Stambulova, N. , Career transitions and career termination. In G. Tenenbaum & R.C. Eklund (Eds.), Handbook of sport psychology, 3rd ed., New York: Wiley, 2007, pp.712-736. https://www.researchgate.net/publication/230551111_Career_Transitions_and_Career_Termination. [access: 24.09.23].
4. Bronfenbrenner, U., The ecology of human development. Cambridge, Mass: Harvard University Press, 1979, 352 p. https://www.hup.harvard.edu/catalog.php?isbn=9780674224575 [access: 25.09.23].
5. Dergach, E.A., & Ryabinina, S.K. , Main Reasons for Ending Sport Career and Revealing the Factors Influencing its Success with Acting Athletes. Journal of Siberian Federal University. Humanities & Social Sciences, 9 (4), 2011, pp. 1330-1342. https://cyberleninka.ru/article/n/main-reasons-for-ending-sport-career-and-revealing-the-factors-influencing-its-success-with-acting-athletes [access: 25.09.23]
6. Kerr, G., & Dacyshyn, A., The Retirement Experiences of Elite, Female Gymnasts. Journal of Applied Sport Psychology, 12(2), 2000, pp. 115-133. DOI: 10.1080/10413200008404218. [access: 25.09.23].
7. Lavallee, D., Grove, J. R., & Gordon, S. (1997). The causes of career termination from sport and their relationship to post-retirement adjustment among elite-amateur athletes in Australia. *The Australian Psychologist, 32,* 131-135. DOI: 10. 1080/00050069708257366. [access: 25.09.23]
8. López de Subijana C., Galatti, L.R., Moreno, R., & Chamorro, J.L., Analysis of the athletic career and retirement depending on the type of sport: A comparison between

individual and team sports. International Journal of Environmental Research and Public Health, 2020, 17(24), 9265, 11 p. DOI: 10.3390/ijerph17249265 [access: 25.09.23].

9. Moesch, K., Mayer, C., & Elbe, A-M., Reasons for Career Termination in Danish Elite Athletes: Investigating Gender Differences and the Time-point as Potential Correlates. *Sport Science Review, XXI*(5-6), 2012, pp. 49-68. https://doi.org/10.2478/v10237-012-0018-2. [access: 25.09.23]
10. Swan, I., Souglis, A., & Andronikos, G., Investigating the reasons for dropping out by competitive artistic gymnastics. Journal of Physical Education and Sport, 22(1), 2022, pp.55-66. DOI: 10.7752/jpes.2022.01007. [access: 25.09.23]

## REASONS OF YOUNG GYMNASTS' SPORTS CAREER TERMINATION

*H. S. Gasparyan, N. V. Selumyan, A. T. Petrosyan*
*Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia*

## ABSTRACT

**Keywords:** young gymnasts, sports career, career termination, reasons, retirement from sports.

**Research relevance:** During the analysis of the literature, it turned out that in different countries there are certain differences in the reasons that determine the termination of the sports career of athletes. In addition, it turned out that representatives of various sports were included in many studies, which do not provide an accurate assessment of the reasons for the termination of a sports career in gymnastics.

**Research aim**: The purpose of the study is to find out the reasons of young gymnasts' sports career termination in Armenia.

**Research methods and organization:** To solve the research tasks, it was planned to carry out a sociological study using a specially designed questionnaire, which revealed the biographical data of the participants. To find out the reasons of young gymnasts' sport career termination, an open question was asked. The former gymnasts had to answer what reason or reasons they had to terminate their sports career.

**Research result analysis:** The age data of gymnasts (X, σ) were analyzed according to the start of training age - 6.5 ± 1.62, the end of the career - 13.27 ± 1.72, and the duration of sports career - 6.77 ± 2.23. All participants of the study ended their career at the age of

11-17 years. As a result of the content analysis, the following reasons were identified: lack of sports achievements and progress, lack of sports motivation, sports injuries, transition to another sport, family reasons, financial problems, difficulty in combining training and study, fear of injury, coach related reasons, exhaustion, inadequate infrastructure and sport equipment, health problems.

**Conclusion:** The termination of the sports career of young Armenian gymnasts is due to 12 different reasons, amongst them the main ones are lack of athletic achievements (insufficient progress for an athlete), lack of motivation, injuries.

## ПРИЧИНЫ ЗАВЕРШЕНИЯ СПОРТИВНОЙ КАРЬЕРЫ ПОДРОСТКОВ, СПЕЦИАЛИЗИРУЮЩИХСЯ В ГИМНАСТИКЕ

*Г. С. Гаспарян, Н. В. Селумян, А. Т. Петросян*
*Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения*

## АННОТАЦИЯ

**Ключевые слова:** юные гимнасты, спортивная карьера, завершение карьеры, причины, уход из спорта.

**Актуальность исследования**. В ходе анализа литературы выяснилось, что в разных странах существуют определенные различия в причинах, определяющих завершение спортивной карьеры спортсменов. Кроме того, выяснилось, что во многих исследованиях были включены представители различных видов спорта, что не позволяет точно оценить причины прекращения спортивной карьеры в спортивной гимнастике.

**Цель исследовани.** Выяснить причины завершения спортивной карьеры юных гимнастов, тренирующихся в Армении.

**Методы и организация исследования**. Для решения задач исследования планировалось провести социологическое исследование. Социологический опрос проводили с помощью специально разработанной анкеты. Выявлены биографические данные участников, возраст начала и окончания тренировок, продолжительность спортивной карьеры. Для выяснения причин, ограничивающих карьеру в спортивной гимнастике, был задан открытый вопрос, по которому бывшие гимнасты должны были ответить, по какой причине или причинам они завершили свою спортивную карьеру.

**Анализ полученных результатов.** Анализируя возрастные статистические данные гимнастов (X±σ), были получены следующие показатели: возраст начала тренировок - 6,5 ± 1,62, возраст завершения тренировок - 13,27 ± 1,72, продолжительность спортивной карьеры - 6,77 ± 2,23. Все участники исследования завершили свою карьеру в возрасте 11-17 лет. В результате контент анализа были выявлены следующие причины: недостаток спортивных достижений и прогресса, отсутствие спортивной мотивации, спортивные травмы, переход в другой вид спорта, семейные причины, финансовые проблемы, сложность совмещения обучения и тренировки, страх получить травму, причины, связанные с тренером, переутомление, неадекватное состояние инфраструктуры и спортивного инвентаря, проблемы со здоровьем.

**Краткие выводы.** Завершение спортивной карьеры юных гимнастов обусловлено 12-ю различными причинами, основными из которых являются: отсутствие спортивных достижений (недостаточный прогресс для спортсмена), отсутствие мотивации, травмы.

### *Տեղեկություններ հեղինակների մասին*

Հայկ Սուրենի Գասպարյան՝ մ.գ.թ., Հ. Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail.: hayk.gasparyan@sportedu.am

Նարինե Վիլիկի Սելումյան՝ մ.գ.թ., Հ.Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի պրոֆեսոր, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail.: narine.selumyan@sportedu.am

Արմեն Տիգրանի Պետրոսյան՝ Հ. Շահինյանի անվան մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail.: aapetrosyan1994@gmail.com

### *Information about the authors*

Hayk Suren Gasparyan, PhD, Associate Professor of the Department of Gymnastics, Sport Dances, Figure Skating and Chess after H. Shahinyan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E .mail: hayk.gasparyan@sportedu.am

Narine Vilik Selumyan, PhD, Professor of the Department of Gymnastics, Sport Dances, Figure Skating and Chess after H. Shahinyan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E.mail: narine.selumyan@sportedu.am

Armen Tigran Petrosyan, Postgraduate student, Department of Gymnastics, Sport Dances, Figure Skating and Chess named after H. Shahinyan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E. mail: aapetrosyan1994@gmail.com

Հոդվածն ընդունվել է 12.10.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 13.10.2023–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան